**համաձայնագրի իրականացման համար լիազոր մարմին նշանակելու մասին**

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

--- ------ 2017 թվականի N ---  -Ա

<<ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԵՎ ԱՅԼ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ, ԴՐԱՆՑ ՇԱՐԺԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՌԱԶՄԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՀԱՎԱՔԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ>> ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԼԻԱԶՈՐ ՄԱՐՄԻՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 51-րդ հոդվածի 3-րդ մասով և հիմք ընդունելով 2017 թվականի փետրվարի 9-ին կնքված <<Զինվորական և այլ կազմավորումների, դրանց շարժական գույքի, ինչպես նաև ռազմական նշանակության արտադրանքի փոխադրումների բնագավառում Հավաքական անվտանգության մասին կազմակերպության անդամ պետությունների համագործակցության մասին>> համաձայնագրի (այսուհետ` համաձայնագիր) 3-րդ հոդվածի պահանջները` Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Համաձայնագրի իրականացման համար լիազոր մարմին նշանակել Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությանը: